# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«***69Դ Պ-ԳՀ ԱԾՁԲ-20/1***» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան <<26>> <<օգոստոս>> 2020թ., ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտաշես Մուսաելյան

Անդամներ՝

Հարությունյան Գոհար

Նազլուխանյան Ռաֆիկ

Քարտուղար՝ Գայանե Մելիքյան

**«*69Դ Պ-ԳՀ ԱԾՁԲ-20/1*» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների հաստատման մասին**

1. «***69Դ Պ-ԳՀ ԱԾՁԲ-20/1***» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ էին ներկայացրել՝

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ, «ՄԵՏԱԴՈՐ» ՍՊ Ը, «Շախուլյան Շին» ՍՊԸ, «ՆԵՄՐՈՒԹ»ՍՊԸ, «ՁԱՏԵԳԾԻՆ» ՍՊԸ -ները:

Հրավերին հայտ ներկայացրած «ՁԱՏԵԳԾԻՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված ծրարում բացակայում էին հրավերով պահանջվող, մասնակցի կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվը: Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով տեղեկացրել էր մասնակցին՝ «ՁԱՏԵԳԾԻՆ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Կարգին համապատասխան մասնակիցը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է իր կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվը: Հանձնաժողովը անհամապատասխանությունը համարել է շտկված և «ՁԱՏԵԳԾԻՆ»ՍՊԸ-ի հայտը համարվել է բավարար:

ՀՀ կառավարության 2017 թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, նաև հրավերի 8.7 կետին համապատասխան, էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ**-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Արդյունքում` «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ -ի վերաբերյալ ուղարկվեց հարցում ՊԵԿ և ստացվեց պատասխան սահմանված ժամկետներում, ըստ որի «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 540 դրամ ժամկետանց պարտավորություններ:
Սակայն հիմք ընդունելով Հրավերի 2.1 կետը ր Կարգի 67-րդ կետը գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը համարեց բավարար և *«69Դ Պ-ԳՀ ԱՇՁԲ-20/1»* ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչեց **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ –ին:**

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ`

*«69Դ Պ-ԳՀ ԱՇՁԲ-20/1»* ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող ճանաչված **«ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ** -ի հետ կնքել գնման պայմանագիր, 5 օրյա անգործության ժամկետի ավարտից հետո::

Ընդունվել է որոշում` կողմ 3/երեք հոգի

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի Նախագահի`

տնտեսվար — Արտաշես Մուսաեյան

Անդամներ`

տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով — Գոհար Հարությունյան

ցերեկային պահակ — Ռաֆիկ Նազլուխանյան

Հանձնաժողովի քարտուղար` — Գայանե Մելիքյան